ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 47-Ա « 08 » հունվարի 2026 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 04-Ի
Հ. 25-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածով՝

1. Երևան քաղաքապետի 2022 թվականի հունվարի 04-ի «Երևանի Ա. Բակունցի 2-րդ նրբանցքի հ. 1 շենքի հ. 29՝ 49.81 քմ ընդհանուր մակերեսով բնակարանն անհատույց օտարելու մասին» հ. 25-Ա որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Երևան համայնքի սեփականություն համարվող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 30.07.2010թ. հ. 2476903 վկայական), ք. Երևանի Ա. Բակունցի 2-րդ նրբանցքի հ. 1 շենքի հ. 29՝ 49.81 քմ ընդհանուր մակերեսով բնակարանը նվիրել նույն բնակարանի բնակիչներ՝ Մարիետա, Սյուզաննա և Մարիաննա Չերկեզովաներին, Փաշա և Մանվել Աղայաններին և անչափահասներ՝ Ալեքս և Յուրի Չերկեզովներին, որոնց անունից հանդես է գալիս մայրը՝ Սյուզաննա Չերկեզովան (7 անձ, այսուհետ նվիրառուներ)՝ որպես ընտանիքի բոլոր անդամների համատեղ սեփականություն:».

2) որոշման 4-րդ կետում ՝ «երկամսյա ժամկետում» բառերը փոխարինել «դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում» բառերով:

2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ